

**ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԻՐԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԻՑ**

ԽԱՉԱՏՏՐՅԱՆ Հ. Գ.

Այսօր շատերն են խոսում քաղաքակրթության ճգնաժամի մասին: Այդ առումով տեղին է հիշատակել ամերիկացի փիլիսոփա Ֆ. Ֆուկույամայի «Մեծ ճեղքվածք»¹ աշխատանքը, որտեղ նա, բացահայտելով ճգնաժամի որոշ պատճառներ, հիմնավորում է սոցիալական կապիտալի վերականգնման իրատեսական լինելը: Այդ ճգնաժամը խորը մտորումների տեղիք է տալիս, որն արտահայտվում է փիլիսոփայական, քաղաքական, բարոյագիտական, հոգեբանական, իրավաբանական դիտարկումների արդյունքների գիտատեսական ընդհանրացումներով և դրանց շրջանակում մի շարք լծակներ ու միջոցներ գործողության մեջ դնելու առաջարկություններով: Մարդկային գործունեության բոլոր ձևերը մեկ ամբողջության մեջ բազմաբնույթ հիմնախնդիրների պատճառ են դառնում և մարդուն ստիպում հանգուցալուծել դրանք: Փաստորեն, ինչպես մարդկային պատմության էջերն են վկայում, փուլային զարգացումը մարդկությանը պարտադրում է կանգնել գծային զարգացման գործոնների փնտրտուքի առջև: Հանրահայտ է, որ զարգացման ժամանակի գծային փաստն արձանագրող չափորոշիչներն են. ա) կայուն զարգացող տնտեսական համակարգը և անհատի(ների) կենսամակարդակի բարելավման միտումը, բ) ժողովրդավարական արժեքների ու նորմերի արմատավորումը, գ) օրենքի գերակայության զանգվածային մակարդակի ըմբռնումն ու դրա անհրաժեշտության գաղափարի արմատավորումը, դ) հասարակության սոցիալ-կրթական արժեքային կողմնորոշումը: Բնականաբար, կա նաև այս չափորոշիչների ձևավորման նախադրյալ-գործոնների հիմնախնդիրը՝ այն էլ ելակետայինի, առանցքայինի և հիմնարարի առումով: Դա ինքնին շեշտում է ճգնաժամային իրավիճակից դուրս գալու մի շարք գործոնների համակարգում համեմատաբար գլխավոր, վճռական կարևորություն ունեցող գործոնի բացահայտման ու կիրառման նշանակությունը փաստարկելու անհրաժեշտությունը: Այսօր այս կամ այն ազգային պետության (ասենք՝ Հայաստանի Հանրապետության) առջև ծառայած հիմնախնդիրը չէ դա և կրում է գլոբալ բնույթ:

Չբացառելով տարբեր տեսանկյուններից այդ խնդրի լուծման մոտեցումները, այնուամենայնիվ, հակված ենք դեպի կրթական գործոն՝ փաստարկումը բխեցնելով քաղաքագիտական տեսությունից: Սոցիալ-քաղաքական ոլորապտույտները հիմնականում պայմանավորված են քաղաքական գործընթացներով, որոնց վրա իրենց ազդեցությունն են թողնում սոցիալական խմբերը, որոնք մշտապես բախումների մեջ են իշխանությունների հետ՝ հատկապես ժամանակի գործոնը անհատի սոցիալական զարգացմանը չծառայեցնելու:

¹ Фукуяма Ф., *Великий разрыв*, М., 2004.

պարագայում: Այդ ժամանակի համակարգի բաղադրյալ տարրերն են աշխատանքի և հանգստի, ուսման և սոցիալ-կենցաղային այլ պահանջումների բավարարման ժամանակները²: Արդի քաղաքագիտության շրջանակում այսօր գոյավորվում է հարաբերականորեն ինքնուրույն գիտական ճյուղ՝ «խրոնոպոլիտոլոգիա», որն ուսումնասիրում է սոցիումի քաղաքական զարգացման ռիթմերն ու տեմպերը տվյալ ազգային պետության մեջ, հասարակական ժամանակի բաշխումը, ինչպես նաև սոցիալ-քաղաքական գործընթացների և բաշխվող հասարակական ժամանակի միջև դրսևորվող փոխադարձ կապը: Շեշտենք, որ վերը թվարկված ժամանակները սոցիալականորեն համընդհանուր նշանակություն ունեն, այդ իսկ պատճառով էլ առնչվում են մեր հիմնախնդիրն սոցիալ-կրթական չափորոշիչով, հատկապես ապագա քաղաքացիների մեջ ճանաչողական (կոգնիտիվ) որակներ ձևավորելու և հասարակական ժամանակի նպատակասլաց ու հումանիստական ուղղվածությամբ ազգային պետության կերպափոխման համար նախադրյալներ ստեղծելու առումով: Դրրանք էլ վճռական են սոցիալ-քաղաքական բախումներից հասարակությունն աստիճանաբար ձեռքբազատելու համար: Փաստորեն, այդ գործընթացը կարելի է պատկերացնել, մի կողմից՝ քաղաքական, իսկ մյուս կողմից՝ համընդհանուր մակարդակով անհատի սոցիալ-կրթական չափորոշիչի ապահովման առումով:

Արևմտյան սոցիոլոգներ՝ Պ. Բլայթոնը, Կ. Նեյլանդը և Ջ. Հասարդը կարծում են, որ ժամանակակից հասարակության մեջ անհավասարության հիմնական ինդիկատորն են աշխատանքային օրվա տևողությունն ու ազատ ժամանակը: Կյանքի որակի բարձրացման համար, ըստ նրանց, անհրաժեշտ է ոչ թե ժամանակի մեխանիկական բաշխումը, այլ բաշխվող ժամանակի տեսանկյունից վերադարձ կորըստյան մատնված ներդաշնակությանը³: Արդյո՞ք կարելի է ակնկալել նշված ներդաշնակության վերադարձը հենց ազգային կրթական գործով: Ակնհայտորեն մեր առջև է մի հիմնախնդիր, որն իր լուծման առումով կապված է դժվարությունների հետ, հատկապես, միջառարկայականի, այն է՝ մանկավարժական, սոցիոլոգիական, քաղաքագիտական հայեցակետից:

Դիտարկենք քաղաքական գործընթացներին վերաբերող գիտատեսական այն դրույթները, որոնք հնարավոր կդարձնեն պատկերացնել քաղաքական գործընթացը՝ իր բազմաբնույթ հիմնախնդիրներով (սկսած քաղաքական իշխանության, էլիտայի մասին տեսություններից, վերջացրած քաղաքական մշակույթին վերաբերող տեսությամբ): Այսօր համեմատական (կոմպարատիվիստական), քաղաքագիտության տեսության շրջանակում աստիճանաբար ճանաչում է ստանում տարբեր երկրներում քաղաքական համակարգերի առանձնահատկությունների պատճառների բացահայտման գաղափարը: Այսպես, ասենք՝ ինչպե՞ս է, որ անգլո-սաքսոնական (կամ եվրոաշխարհաքաղաքական) տիպի քաղաքական համակարգը ժողովրդ-

² Տե՛ս *Панарин А. С., Философия политики, М., 1996, с. 82.*

³ Տե՛ս *Политология, под ред. Мокшина В. К., М., 2008, с.137-138.*

դավարականի հայեցակետից բնութագրվում է որպես արժեքային համակարգ, իսկ մինչարդյունաբերականը՝ ոչ: Բանն այն է, որ այն կարելի է կապել ոչ այնքան եվրոպական (հատկապես հունահռոմեական) քաղաքական գենոտիպի, որքան վերջին 150 տարիների ընթացքում մի շարք գործոններով պայմանավորվող տեղաշարժերի հետ, որոնց վրա արդեն արժե ուշադրություն դարձնել, հատկապես, ընդհանրացման առումով: Սկսած Օգյուստ Կոնտից և Կ. Մարքսից, վերջացրած ժամանակակից հեղինակներով՝ ակտիվ քաղաքական մասնակցությունը նկատի է առնվել հենց կրթականի հայեցակետից, ընդ որում, վերջինս այսօր ընդունվում է որպես ճանաչողականով պայմանավորված քաղաքական հաղորդակցությունն ապահովող անփոխարինելի գործոն: Քաղաքական համակարգի կատարելագործումը կրթականի շնորհիվ այսօր ավելի ու ավելի է դառնում XXI դ. զարգացման առանցքային միտումը: Այսպես, ամերիկացի սոցիոլոգ Ն. Ամեզերը ազգային որակյալ կրթությունը բնորոշում է որպես մարդկային, քաղաքացիական, քաղաքական, տնտեսական ու մշակութային իրավունքների իրականացման հիմնարար պայման, որի շնորհիվ էլ ներկայումս, կրթությունը համարվում է ազգի մտավոր զարգացման գլխավոր գործոնն ու նրա ինքնուրույնության պահպանման երաշխիքը, հատկապես՝ իր մրցունակության ապահովման առումով: Ազգային որակյալ կրթությունը, ըստ նրա, նպաստում է ժողովրդավարության զարգացմանն ու հասարակության համախմբմանը, շնորհիվ այն բանի, որ ձևավորում և դաստիարակում է լավ իրազեկված քաղաքացիներ, որոնց այլևս հնարավոր չէ հիմարացնել ամբոխավարությամբ և լոգունգներով⁴: Նման բնորոշումն արդի փուլում գործնական քայլեր կատարելու նախապայման է:

Այսօր ոչ մեկն այլևս չի կարող հերքել, որ վերը նշված արժեքային քաղաքական համակարգեր ներկայացնող զարգացած երկրների կառավարությունները նույնիսկ բարձրագույն կրթության հիմնախնդրի լուծման հարց են բարձրացնում՝ զանգվածային մակարդակով սոցիալական կապիտալ ստեղծելու և քաղաքացիական հասարակություն ձևավորելու նպատակով: Համամիտ լինելով փիլիսոփա Գ. Աշինին՝ նշենք, որ արդի փուլում ամեն մի երկիր կրթության բնագավառում իր քաղաքականությունը որոշելիս, ցանկալի կլինի, եթե հաշվի առնի 2005 թ. Գլենիգլսեում «Մեծ ութնյակի» լիդերների հայտարարությունն այն մասին, որ աջակցության է արժանանալու բոլորի անվճար, լիարժեք ու որակյալ կրթության ծրագիրը, որի իրականացումն արդյունավետ ազդեցություն կթողնի տեղեկատվական հասարակության պահանջներին համապատասխան քաղաքացիներ ձևավորող ընդհանուր գործընթացի վրա⁵:

Ինչո՞ւ նման բովանդակությամբ հայտարարություն արեցին հենց այդ երկրների ղեկավարները: Համեմատական տեսության հայեցակետից վերլուծությունը բացահայտում է կրթականի առաքե-

⁴ Смельзер Н., Социология, М., 1994, с. 9.

⁵ Ашин Г. К., Мировое элитное образование, М., 2008, с. 22-23.

լությունն ընդհանրապես (որպես տեսական մոդել), որ քաղաքական գործունեության ուղենիշ կարող է դառնալ քաղաքական ռազմավարության համար: Դա, օրինակ, մեզ նաև հնարավորություն կընձեռի կասկածի տակ չդնել հայոց իմացական գենի ներունակությունը և ոչ էլ վերջնականապես հիասթափվել⁶, այլ կողմնորոշվել դեպի փորձություն բռնած իրականությունը՝ համարձակորեն նայելով դրան: Այդ իրականությունն այսպիսին է: Անհատն իր քաղաքական մշակույթի պատշաճ մակարդակով աչքի է ընկնում այն ազգային պետությունում, որտեղ կրթության հիմնախնդիրները քաղաքական սուբյեկտների ուշադրության ու հոգածության առարկան են: Սա այն ելակետայինն է, որն արձանագրվել է համեմատության շնորհիվ, և որի արժանահավատությունը կասկածից վեր է: Հայկական իրականության համար բնութագրական է հատկապես, որ «...ռուսաստանյան համալսարաններն ու ինստիտուտներն ընդունվում են հանրակրթական դպրոցի այնպիսի շրջանավարտները, որոնք չեն տիրապետում մարդու իրավունքների և քաղաքականության մասին նույնիսկ նվազագույն պատկերացումներին. նրանք ավարտում են բուհը՝ այդ առումով մնալով մեծ մասամբ (ընդ որում, նրանցից շատերը) նույն մակարդակին»⁷: Նման փաստի առջև հայտնվելը համաշխարհային (այդ թվում՝ հայկական) մանկավարժական ու սոցիալ-քաղաքական գիտական փորձություն բռնած դրույթների պահանջներին համապատասխան մեր ազգային կրթությունը չկազմակերպելու հետևանքն է, որի դառը պտուղները «ճաշակում» ենք: Այսպես, եթե արևմտյան քաղաքական ու մանկավարժագիտական միտքը արհեստոտեյան հետևյալ դրույթի կարևորությունը շրջանցեր, հազիվ թե նվաճած լիներ այսօրվա բնագծերը: Արհեստոտելը գրում է. «...պետք է խոստովանել, որ եթե կարևորագույն գիտությունն ուսումնասիրության աստիճանի վրա բարձրացվի, բարձրագույն բարիք կբերի պոլիսին: Այդպիսի գիտություն է քաղաքականությունը: Չէ՞ որ հենց դա է հաստատում, թե ինչպիսի՞ գիտություններ են պետք պոլիսին, ո՞րը, և ամեն ոք ի՞նչ ծավալով է պարտավոր ուսումնասիրել: Մենք տեսնում ենք, որ առավել հարգանքի արժանի հմտությունները՝ ռազմականը, տնտեսականը և պերճախոսությունը «ստորակարգ» են քաղաքականության համեմատ: Պոլիսի մասին այդ գիտությունը կիրառում են մյուս գիտությունները՝ որպես միջոց ու բացի դրանից, այն օրենսդրորեն որոշում է, թե ո՞ր արարքները պետք է խրախուսել և որոնցից հրաժարվել: Այս ամենը ներառում է որոշակի նպատակ մյուս գիտությունների համար: Հետևաբար, հենց այդ նպատակն էլ լինելու է բարձրագույն բարիքը բոլոր մարդկանց համար ընդհանրապես»⁸:

⁶ Այս խնդրի մասին տե՛ս **Фромм Э.**, «Иметь» или «быть», М., 2008, с. 262.

⁷ Воспитание в духе прав человека (Полис, 1997, N 2, с. 172).

⁸ **Аристотель**, Политика (Сочинения в 4-х томах, т. 4, М., 1983, с. 263).

Եթե այդ հայեցակետից մոտենանք քաղաքական գործընթացներին, հնարավոր կլինի դրանք ապահովող գործոնների համակարգում նկատի ունենալ կրթականի դերը: Զուգահեռաբար դիտարկելով քաղաքական գործընթացների մասին քաղաքագիտական որոշ տեսություններ և կրթությունը՝ որպես յուրատիպ գործընթաց, սոցիալական երևույթ, բարձրացված հարցը պատշաճ և արժանահավատ պատասխան կստանա, հատկապես այն դեպքում, երբ որոշակիություն կմտցվի գործածվող երկու տերմինի՝ ա) լքաղաքական գործընթացի» և «կրթության բովանդակության» դիտարկման շնորհիվ: Փաստորեն, դրանց միջև տրամաբանական կապի բացահայտումն էլ հավաստիության աստիճանի կբարձրացնի կրթության ազգային առաքելությունը՝ քաղաքականության ոլորտի հիմնախնդիրների լուծման առումով: Այսպես, քաղաքագիտական տեսության մեջ «քաղաքական գործընթացը» չափորոշիչ է քաղաքական կյանքի փոխակերպման, քաղաքական համակարգի կատարելագործման և ինչպես մակրո, այնպես էլ միկրոմակարդակով քաղաքացիների ակտիվ մասնակցության հայեցակետից: Մրանք առնչվում են քաղաքական գործընթացի կառուցվածքի տարրերին: Ուշադրության է արժանի այն փաստը, որ քաղաքական գործընթացը հիմնականում կապվում է հասարակական կյանքի ժողովրդավարացման հետ, իսկ վերջինս էլ օրինաչափորեն առնչվում է քաղաքական գործընթացի կառուցվածքի հիմնական տարրերին՝ քաղաքական օբյեկտին, սուբյեկտին, ինչպես նաև այդ գործընթացը լավագույնս խորացնելու միջոցներին, մեթոդներին և ռեսուրսներին⁹:

Քաղաքական գործընթացի նպաստավոր արդյունքը պայմանավորվում է հիմնականում նշված տարրերի, հատկապես իշխանության ձևավորման մտավոր ռեսուրսի ապահովման չափորոշիչով: Պատահական չէ, որ քաղաքագետներն այսօր շեշտում են քաղաքական գործընթացի դրական արդյունքներն ապահովող ոչ այնքան ներքին (իշխանական ռեսուրսների բաշխումը և քաղաքական գործընթացի տրամաբանությունը), որքան արտաքին գործոնները՝ սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային պայմանները, որոնք ձևավորում են որոշակի միջավայր, ինչպես նաև ազդեցություն թողնում քաղաքական գործընթացի ուղղվածության վրա¹⁰: Մրանից բացի, էական է կրթական գործոնը, քանի որ հենց այդ սոցիալական ինստիտուտի միջոցով են նախադրյալներ ստեղծվում քաղաքական սուբյեկտների, օբյեկտների և իշխանության ձևավորման մտավոր ռեսուրսների գոյավորման համար, որոնք դառնում են վճռական գործոն սոցիալ-մշակութային միջավայրի ստեղծման և քաղաքական գործընթացներն առաջ մղելու համար: Այս դեպքում արդեն կարող է իրատեսական դառնալ կայուն (հակառակ անկայունի և ստվերայինի) տիպի գործընթացը՝ նպաստելով նաև քաղաքական համակարգի ռիթմիկ և օպտիմալ վերարտադրությանն ու դրա կատարելա

⁹ *Տե՛ս և* Политология. Учебник для вузов, под ред. Решетникова С., Минск, 2001, с. 259.

¹⁰ *Տե՛ս և* Хейвуд Э., Политология, М., 2005, с. 146.

գործմանը: Կարևոր է նաև կրթության, անհատի ընդհանուր սոցիալական, մասնավորապես, քաղաքական մշակույթի համահարաբերակցության հիմնախնդիրը: Փաստորեն, անհատի (սուբյեկտի) քաղաքական և ընդհանուր սոցիալական մշակույթի ձևավորման հիմքում առանցքային գործոն է միայն կրթականը. այն մեկնակետային է ապագա քաղաքակիրթ քաղակականությունը ձևավորելու և քաղաքացիական հասարակությանն անցնելու հնարավորություն ստեղծելու առումով:

Վերը նշվեց, որ քաղաքական գործընթացն աչքի է ընկնում մի շարք առնչություններով քաղաքական կյանքի հետ, որը կարող է համապատասխանորեն արժևորվել ընկալող սուբյեկտի կողմից: Այս առումով էլ ակներև է դառնում ազգային կրթության առաքելությունը՝ քաղաքականի ըմբռնումն ու դրան արձագանքելը հարաբերականորեն հասցնել այնպիսի մի մակարդակի, որը ոչ թե սուբստանցիոնալ է (առօրեական-պարզունակացված), այլ՝ գնոսեոլոգիական, այսինքն՝ իմացաբանական: Իսկ ի՞նչ իմացաբանական մակարդակի մասին է խոսքը, երբ, ինչպես նշվեց, ազգային դպրոցի աշակերտների և բուհի ուսանողության մեծամասնությունն այսօր աչքի է ընկնում անիրագելությամբ և քաղաքական թերի գիտելիքներով կամ բացակայությամբ: Խոսքն այն մասին չէ, որ բոլորը պետք է դառնան քաղաքագետներ: Խնդիրն այստեղ լրիվ այլ է. ազգային դպրոցը պետք է նախապատրաստի քաղաքական կյանք մտնող քիչ թե շատ կոգնիտիվ չափորոշիչներով աչքի ընկնող քաղաքացիներ: Սա բխում է նաև մեր կրթական ռազմավարությունից. «Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է»¹¹: Դրա իրականացման գործոնների գիտատեսական հիմնավորումն այսօր առանցքային է:

Շրջանավարտը (հանրակրթական, նաև բուհական) ե՞րբ կարող է հայրենասիրության ու պետականության ոգով դրսևորել իրեն: Այս հիմնախնդրի լուծումը (եթե մարդը նույնիսկ քաղաքականության մասին խորը գիտելիքների չի տիրապետում) հնարավոր է քաղաքական և ընդհանրապես սոցիալական, ազգային մշակույթի ձևավորման շնորհիվ: Վերջինս ենթադրում է գիտելիքների համապատասխան համակարգի ձևավորում: Հենց դա էլ ազգային դպրոցի առաքելության առանցքն է՝ քաղաքագիտական տեսության հայեցակետից: Տեղին է նշել, որ հետպատերազմյան շրջանում Արևմտյան Գերմանիայում նացիզմի դեմ մղվող պայքարն ու դրանից ձերբազատվելը հեռանկարի տեսանկյունից մի շարք գիտնական-մանկավարժ-հումանիստներ կապեցին նոր բնույթի կրթության՝ քաղաքականի հետ, սկսած հանրակրթական դպրոցից: Նույն դիրքորոշումը մեջտեղ բերվեց 1990 թ., երբ տեղի ունեցավ երկու Գերմանիաների միավորումը, և քաղաքական կրթության հիմքերն էին դրվելու:

¹¹ Կրթության մասին ՀՀ օրենքը, Ե., 2004, էջ 8:

արևելյան մասում: Խոսքը կրթության, դպրոցի քաղաքականացման մասին չէ և ոչ էլ կրթության շրջանում, այսպես կոչված, «բռնատիրական ինդոկտրինացիայի» սկզբունքներով աճող սերնդին միաչափ մարդ դարձնելու և ապագա քաղաքացու մեջ հպատակվող քաղաքական մշակույթ «ձևավորելու» մասին: Գերմանական քաղաքական, մանկավարժական միտքը, վերլուծելով նացիստական Գերմանիայի անցած կրթական ուղին, եկել է կարևոր նշանակություն ունեցող հետևության. բռնատիրական ինդոկտրինացիան երբեք էլ չի կարելի բնորոշել որպես կրթություն¹²:

Քաղաքական, ինչպես նաև տարիքային հոգեբանության գիտակներ Ժ. Պիաժեն, Ա. Կոլբերգը և Ջ. Ադելսոնը պարզել են հետևյալ օրինաչափությունը: Քաղաքական բնույթի՝ ժողովրդավարական և դրան հակառակ, ինչպես նաև գործուն և պասսիվ քաղաքական վարքագծի դրսևորումների՝ հանդուրժողական որակների և դրանց համանման այլ նորմերի ու արժեքների տարրական մակարդակով ձևավորման գործընթացն սկսվում է հենց դպրոցահասակ երեխաների մեջ, հատկապես 11-15 տարեկանում¹³: Դրանք, ինչ խոսք, իրենց բովանդակային առումով հետազայում, պահպանելով համապատասխան ուղղվածությունը (ասենք՝ ժողովրդավարականը), հարըստանում, կատարելագործվում ու վերաիմաստավորվում են տվյալ քաղաքական ժամանակի և տարածության մեջ: Այսպես, փոխադարձ վստահության և դրա հիման վրա միջանհատական հարաբերությունների մեջ մտնելը գերմանացի մանկավարժ-փիլիսոփա Օ. Բոլնովը նկատի է առնում որպես դպրոցական տարիքին բնորոշ գիծ, որն էլ հետազայում կարող է ընկնել տարաբնույթ (ասենք՝ որպես սոցիալական կապիտալ, որը հատկանշվում է վստահության գործոնի առկայությամբ)՝ տնտեսական, քաղաքական և սոցիալական գործունեության հիմքում՝ որպես վարքագիծ¹⁴: Իսկ վստահությունը հուզական-հաղորդակցական որակ է՝ պայմանավորված տվյալ անձի ներաշխարհում ձևավորվող մղումներով: Բացի այդ գործոնից, կա նաև մեկ ուրիշ իրողություն, որն անտեսելը կարող է ճակատագրական լինել ազգային-քաղաքականի հայեցակետից: Դա դպրոցական տարիքի անձի ճանաչողական որակների ձևավորման նախապայմանն է, առանց որի հազիվ թե կարողանանք արդի քաղաքական աշխարհում մեր հեղինակավոր տեղը նվաճել: Վերջին հաշվով, եթե ընդունում ենք, որ մեր ազգային հոգեկերտվածքն աչքի է ընկնում իր իմացականով, որի շնորհիվ տեղի է ունենալու նաև եթնիկական նույնականացումը, իսկ վերջինս էլ, իր հերթին, միջազգային ասպարեզում անփոխարինելի է մեզ բնութագրելու հիմնախնդրում, ապա տրամաբանական է դառնում հիմնահարցի կարևորությունը: Այն վերաբերում է դասական կրթությանը, որն էական դեր կունենա,

¹² *Տե՛ս* Vierzig Jahre Politische Bildung in der Demokratie, Bonn, 1990, S. 31.

¹³ *Այս մասին տե՛ս* Ольшевский Д. В., Основы политической психологии, Екатеринбург, 2001, с. 132-136.

¹⁴ *Տե՛ս* Bollnow O., Neue Gebornheit. Das Problem einer Überwindung des Existenzialismus, Stuttgart, 1979, S. 50-53.

մի կողմից, ամեն մի ազգի, նաև համամարդկային մշակույթի, մյուս կողմից, ազգի ու պետության մերձեցման հիմնախնդրի լուծման առումով:

Ժամանակակից քաղաքագետ-փիլիսոփա Լեո Շտրաուսի բնորոշումը դասական կրթության մասին պերճախոս է, և արդարացի կլինի այն ուշադրության արժանացնել նաև մեր իրականության մեջ: Ըստ նրա, դասական կրթությունը հակաթույն է ամբոխավարական մշակույթի դեմ, որին բնորոշ է ոչինչ չստեղծելը, բացի «անհոգի մասնագետներից և անսիրտ վավաշոտներից»: «Դասական կրթությունը, աստիճան է, որով մենք ձգտում ենք ամբոխավարությունից բարձրանալ դեպի իսկական ժողովրդավարություն, ընդ որում, նրա էլակետային նշանակությամբ»¹⁵: Այսինքն՝ արդի փուլում դասական կրթությունը վերը նշված կրթական ռազմավարության իրականացման առանցքային գործոնն է, և կրթական ամբողջ համակարգը դրա կատարելագործմամբ է ապահովում մնացյալ գործոնների համախմբումն ու ազգային պետության ժողովրդավարացումը: Վերջինս իր լուծման հրատապությամբ (ոչ թե հապճեպությամբ կամ հախուռն շտապողականությամբ) ենթադրում է անձի քաղաքական սոցիալականացման՝ ազգային-ակունքայինը ներկայացնող հիմնարար արժեքների ու նորմերի ներքնայնացման (ինտերիորիզացման) գործընթաց, որն էլ վճռական կլինի ազգային-քաղաքական գիտակցության ձևավորման հարցում:

Երբեմն թվում է, թե, ասենք, հայ գրականության ու պատմության և համաշխարհային պատմության ու գրականության ուսումնասիրությունը դպրոցում մասնակի ազդեցություն է թողնում, սակայն դա այդպես չէ: Հնուտ մանկավարժը կարևորագույն արժեքների ներկայացմամբ կարող է լավագույնս ձևավորել աշակերտի հուզազգայական ներաշխարհը, որն էլ հետագայում կդրսևորվի իմաստային (այն է՝ բովանդակավորված) հաղորդակցմամբ՝ բոլոր տեսակի (ներառյալ՝ քաղաքական) սոցիալական հարաբերություններում: Փաստորեն, այդ արժեքների ու նորմերի ներքնայնացման գործընթացը միջանկյալ փուլ է տվյալ անհատի համար, հատկապես բազային արժեքների ձեռքբերման առումով, որոնք, ինչպես բնորոշում է ամերիկացի քաղաքագետ և սոցիոլոգ Ռ. Ինգլհարտը, նախորդում են նրա հասունացմանն ու կատարելագործմանը¹⁶: Նման բնույթի սոցիալականացումը բնորոշվում է որպես ընդհանուր սոցիալական մշակույթի հիման վրա ազգային-քաղաքական ուղղվածություն ունեցող սոցիալականացում: Այս կերպ կկարողանանք դաստիարակել սոցիալ-մշակութային դիմագծերով օժտված մի սերունդ, նախապատրաստել քաղաքական կյանքի համար, որն էլ կսկզբնավորի էթնոհանրային և պետության մերձեցման գործընթացը:

¹⁵ Штраус Л., *Что такое классическое образование (Введение в политическую философию, М., 2000, с. 313).*

¹⁶ Инглхарт Р., *Постмодерн: меняющиеся ценности и изменяющееся общество (Полис, 1997, N 4, с 57).*

Այսպիսով, հսկայական է ազգային դպրոցի առաքելությունը քաղաքական գիտակցության ծագման մեջ: Ազգային դպրոցը չի քաղաքականացվում, այլ քաղաքացի դաստիարակելու միջավայր է դառնում, եթե նույնիսկ հարցին մոտենանք քաղաքական կրթության հայացակետից: Քաղաքագետ Վ. Գազելը Դ. Հովհաննիսյանի խմբագրությամբ հրատարակված «Քաղաքական բառապաշար» հանրահայտ գրքում նշում է. «Քաղաքական կրթությունը այնքան հին է, որքան՝ հրապարակային դպրոցը: Այն միշտ եղել է դաստիարակչական խնդրի հիմնական մասը, բայց նրա իսկական պատմությունն սկսվում է 1945 թվականից»¹⁷: Հետևաբար, կարելի է ասել, որ ազգային դպրոցի բոլոր օղակներում (սկսած նույնիսկ նախակրթարանից, վերջացրած բուհով) ուսուցման գործընթացը յուրատիպ երկխոսություն է գիտելիքների բովանդակային մասի (հատկապես ազգայինին ուղղված) և անհատի՝ որպես քաղաքացու գոյավորման միջև: Այս դաստիարակչությունը հիմնականում պետք է պատկերացնել հետևյալ առումով: Հոգեբանության մեջ ճանաչում է ստացել անհատի ճանաչողականի շրջանակում աֆեկտայինի (հուզագգայականի արձագանքը ճանաչող օբյեկտի նկատմամբ) դերը սոցիալականացման գործընթացում, որում էլ ձևավորվում է մարդ-քաղաքացին: Այդպիսի բովանդակությամբ կրթության կազմակերպումը հոգեբան Վ. Ջինչենկոն համարում է իսկական, որն առանց աֆեկտայինի, չի կարող ձևավորել մարդ-քաղաքացի¹⁸:

Անհատի սոցիալականացման, քաղաքական մշակույթի ձևավորման ու զարգացման հարցին քաղաքագիտության տեսության մեջ հատկացվում է անգերազանցելի դեր: Դպրոցահասակ տարիների (ինչ խոսք, որակյալ ուսուցման դեպքում) գիտելիքների ազգային ուղվածությունը ելակետային կլինի հուզագգայականի չափորոշիչի դիտարկման համար: Գիտելիքի և աֆեկտայինի համադրման խնդրի լուծումը ազգայինի չափորոշիչով է միայն հնարավոր դարձնում դպրոցում այնպիսի բովանդակությամբ սոցիալականացում ապահովել, որը պիտի ընկնի էթնոհանրային ժողովրդավարական համախմբմանը նպաստող քաղաքական մշակույթի ձևավորման հիմքում: Քաղաքական մշակույթի՝ ձևավորման գործընթացում կարո՞ղ են դեր ունենալ գիտելիքներն ու աֆեկտայինը, նաև՝ արժևորման տարրը: Քաղաքագիտության տեսության հիմնադիրներ, ամերիկացի քաղաքագետներ Գ. Ալմոնդն ու Ս. Վերբան քաղաքական մշակույթը բնորոշեցին որպես մարդկանց՝ քաղաքական օբյեկտների նկատմամբ հոգեբանական կողմնորոշումների համակարգ: Նրանք իրավամբ կարծում են, որ այդ համակարգն ունի իր բաղադրատարրերը: «Երբ խոսում ենք հասարակության քաղաքական մշակույթի մասին, ապա նկատի ունենք տվյալ քաղաքական համակարգը, որն ազգաբնակչության կողմից ներքնայնացված է գիտելիքներով, հուզա-

¹⁷ Holfman E., *Politik-Lexikon, München, Wien, 1994, S. 471.*

¹⁸ Зинченко В. П., *Аффект и интеллект в образовании, М., 1995, с. 32.*

զգացմունքային տարրերով և արժևորումներով»¹⁹: Նշենք, որ որոշ վերապահումով կարելի է ընդունել նաև «Համաշխարհային քաղաքական մտքի անթուղտիայում» բերվող սահմանումը. «Քաղաքական մշակույթը բազմակերպ է, բայց՝ կայունորեն կրկնվող (ընդգծումը մերն է - Խ. Հ.), կոգնիտիվային, աֆեկտային», իսկ արժևորման կողմնորոշումները վերաբերում են քաղաքական համակարգին ընդհանրապես, ինչպես նաև «մուտքի» և «ելքի» տեսանկյունների մերձեցմանը, որում մեծ դեր են խաղում «քաղաքական ակտորները»²⁰:

Ուշադրության են արժանի քաղաքական մշակույթի կառուցվածքային բաղադրատարրերը՝ ա) կոգնիտիվայինը, բ) աֆեկտայինը և գ) ակտուոգիականը: Իսկ «կայունորեն կրկնվող» արտահայտությունը նպատակ ունի կարևորել կրթականը՝ որպես միջսերնդային սոցիալ-մշակութային կապի պահպանման գործոնի օղակ: Բանն այն է, որ ազգային-քաղաքական առանցքային մի շարք արժեքներ (հայրենասիրություն), դպրոցական տարիքի անձի համար ներկայացնում են և՛ կոգնիտիվայինը, և՛ աֆեկտայինը, և՛ ակտուոգիականը, ու այդ չափորոշիչներով էլ ձևավորվում է նրա քաղաքական մշակույթը (ծագումնաբանական տեսանկյունից): Վերը նշված ինգլիարտյան դատողությունը տեղին է հիմնավորել մեկ բնորոշ օրինակով: Արդի փուլում ազգային դպրոցում պետք է մանկավարժական մեծ հմտությամբ մոտենալ այս հիմնախնդրին: Նշված ուղղությամբ առանձնապես խոր ու դրական ազդեցություն կարող են թողնել ազգային հենքին վերաբերող գիտական նորույթների ներառումը ուսումնական ծրագրերում և համապատասխան պահանջներով առաջնորդվող մանկավարժների պատրաստումը²¹:

Միջսերնդային սոցիալ-մշակութային կապի հաստատման հայեցակետից ազգային դպրոցը կարելի է բնորոշել որպես ազգային-քաղաքական մշակույթի ձևավորման «քաղաքական» տարածություն: Դա հավաստի է ինչպես քաղաքագիտության տեսության, այնպես էլ սոցիալ-քաղաքական պրակտիկայի հայեցակետերից: 1994 թ. ամերիկացի նշանավոր գիտնական, հումանիստ Պ. Մակլարենը նշում է. «Ոչ միայն չի կարելի մանկավարժությունը զրկել քաղաքականության հետ ունեցած փոխհարաբերություններից, այլև նման բան անելը տեսականորեն անագնիվ է»²² :

Էթնոհանրային՝ որպես քաղաքականացվող և ազգային պետություն ստեղծող սուբյեկտի ժողովրդավարական համախմբումը սոսկ քաղաքական գործընթաց չէ: Այն բազմաբնույթ բաղադրատարրերով ապահովվող երևույթ է, որին միշտ թարմ շունչ է հաղորդում

ու

¹⁹ Алмонд Г., Верба С., *Гражданская культура и стабильная демократия* (Полис, 1992, N 4, с. 53).

²⁰ Антология мировой политической мысли, т. 2, М., 1997, с. 597.

²¹ Այդ մասին հանգամանորեն տե՛ս Խաչատրյան Հ., *Ազգային կրթության դերը քաղաքական էթնոֆորի ձևավորման հիմնախնդրում*, Ե., 2008:

²² Մեջբերումն արված է Կ. Թորեսի «Ծողովրդավարություն, կրթություն և բազմամշակութայնություն. քաղաքացիության երկրնորանքները գլոբալ աշխարհում» (Ե., 2005, էջ 48) գրքից:

ազգայինով բովանդակավորում սոցիալ-կրթականը: Դա փաստարկվում է նաև գործնական մակարդակում, որտեղ կարևորվում է ազգային դպրոցի առաքելության իրատեսական լինելը. «Ժողովրդավարական համակարգի ձևավորումն ազգային դպրոցի առաքելության ու քաղաքական սկզբունքի հարց է: Ապագա քաղաքացին, դպրոցում ծանոթանալով քաղաքականության, բարոյականության հիմնախնդիրներին, կարող է վերածվել իր քաղաքական ազգային- պետական մտածելակերպի (Staatsbewusstsein) սուբյեկտին»²³:

Արդի քաղաքագիտական միտքը մեծ տեղ է հատկացնում նաև քաղաքական բնույթի առասպելների նշանակության բացահայտմանն ու կիրառմանը, որի մունետիկը, կարծում ենք՝ իտալացի մեծ մտածող Վ. Պարետոն է: Նա, զգացմունքներից բխող, ածանցվող երևույթի մասին դատողություններ անելով, մեջտեղ է բերում նաև «դերիվացիա» տերմինը (բառացի՝ ածանցյալ): Նա գրում է. «Փաստերը պարզ ապացուցում են, որ դիցաբանությունները չեն համապատասխանում իրականությանը, բայց, այնուամենայնիվ, ունեն սոցիալական մեծ նշանակություն»²⁴: Ավելացնենք, որ դիցաբանության ակունքները կարող են լինել նաև իրականությունից բխող, և այդ տրամաբանությամբ էլ կարելի է նկատի ունենալ դրա բովանդակային ուղղվածությունը, քանի որ խոսքն առնչվում է բանահյուսությանը՝ ընդհանրապես և ժողովրդական էպոսին՝ մասնավորապես:

Քաղաքականությունը ձևավորվում, զարգանում ու կատարելագործվում է երկու փոխմիասնական մակարդակներով՝ պրակտիկ և հոգևոր: Քաղաքական պրակտիկան կազմում են քաղաքական գործունեության ոլորտներն ու ձևերը, վարքագիծը և հատկապես քաղաքական գործընթացը: Պրակտիկ մակարդակին արժեքանորմատիվ ուղղվածություն է հաղորդում հենց հոգևոր մակարդակը, որն էլ իրապես ձևավորում է անհատի և ամբողջ էթնոհանրության քաղաքական մշակույթը՝ իր ազգային քաղաքական արժեքային կողմնորոշմամբ: Ազգային դպրոցում անձի՝ քաղաքական սոցիալականացման ու քաղաքական մշակույթի սուբյեկտի վերածման գործընթացը էթնոմանկավարժորեն պատկերացնելը դժվար չէ: Այսպես, հայկական էպոսը՝ որպես էթնոմանկավարժության գոհար, ունի անգերազանցելի նշանակություն (ինչ խոսք, այս օրինակը խորհրդանշական է, և հակված չենք թերագնահատել նույն բովանդակությամբ բանահյուսական մյուս արժեքները): Էպոսի՝ հայ էթնոմտածողության խտացված արժեքի քաղաքական ուղղվածությունը մանկավարժորեն կիրառելու գաղափարի իրականացումը ուսման գործընթացում կախված է մի շարք նրբություններից: Ազգային դպրոցում ձևավորվող քաղաքական էթնոֆորն²⁵ էպոսի՝ որպես գեղար-

²³ Manfred H. Bernard S. u.a., *Politische Bildung in der Demokratie, Melle, 1990, S. 19.*

²⁴ Մեջբերումը տե՛ս XIX-XX դարասկզբի բուրժուական սոցիոլոգիայի պատմություն, Ե., 1986, էջ 421:

²⁵ Իր էթնոհանրության պատկանելու քաղաքական գիտակցությամբ օժտված անձ:

վեստական բանահյուսական արժեքի կամ պատմական կտրվածքով բնորոշումն ու վերլուծությունը չէ միայն: Մեր կարծիքով, այստեղ էթնիկական մի շարք հատկանշական գծերի հաջորդականության հիմնախնդիրն է դառնալու էթնոմանկավարժական հոգածության առարկան, որն էլ հնարավոր կդարձնի էպոսի բովանդակության՝ ինչպես ճանաչողական, աֆեկտային, այնպես էլ ակտոլոգիական առումները հասցնել ուսման օբյեկտին և նպաստել նրա առանցքային քաղաքական-ազգային արժեքի՝ հայրենասիրության սուբստանցիոնալ (ուսումնականով՝ էլակետային) ձևավորմանը: Մկսած Փոքր Մհերի՝ հասակակիցների վրա ունեցած դրական-դաստիարակաչական ազդեցությունից մինչև Դավթի անձնագոհ սխրանքները էթնոմոլոմների մի ամբողջություն են կազմում և էթնոմանկավարժության հայեցակետից առատ նյութ են քաղաքական ուղղվածությամբ անձի սոցիալականացման համար:

Փաստորեն, պատմական կտրվածքով էթնոհանրույթի ստեղծած սոցիալ-մշակութային արժեքների դերը նրա՝ ազգային կերպարով արդիականացվելու գլխավոր չափորոշիչի աստիճանին է բարձրանում:

**ПРОБЛЕМА НАЦИОНАЛЬНОГО
ОБРАЗОВАНИЯ С ТОЧКИ ЗРЕНИЯ ТЕОРИИ ПОЛИТИКИ**

ХАЧАТРЯН Г. Г.

Резюме

Современное состояние социально-политической жизни высветило неоченимую значимость национального образования в необходимости формирования и развития по типу когнитивной коммуникативности политического субъекта и объекта. Знание о политике, особенно с точки зрения теории политического процесса, об этом сложном комплексе политических отношений в восприятии людей определяет содержательный характер политического поведения и особенности политического сознания этнической общности для ее политической модернизации, т. е. сближение нации и государства.